

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«30» մայիսի 2025թ.

2025 թվականի մայիսի 12-ին հրավիրվել էր «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կառուցվածքը հաստատելու մասին» N 1-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքի փոփոխության հաստատում.

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 2-Լ որոշմամբ հաստատված հաստիքացուցակի փոփոխության հաստատում.

3. Մրցութային կարգով ընտրված՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) հաստատում.

4. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2025 թվականի հաստատված բյուջեի նախահաշվի փոփոխությունների հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Դ. Խուդաթյան ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ

Ե. Վարդանյան ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ

- Ս. Թովմասյան << կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
- Ք. Ղալեյան << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ
- Լ. Սիրականյան << էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
- Գ. Խաչատրյան << քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի, ՀԽ անդամ
- Ա. Խաչատրյան Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհաշինության ոլորտի մասով), ՀԽ անդամ

Քվեարկությանը չեն մասնակցել՝

- Ա. Ադիլխանյան << փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ
- Ա. Հովհաննիսյան << ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
- Ա. Ավանեսյան << ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 7 կողմ, 0 դեմ:

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.


1. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կառուցվածքը հաստատելու մասին» N 1-Լ որոշմամբ հաստատված կառուցվածքի փոփոխությունը.

2. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 2-Լ որոշմամբ հաստատված հաստիքացուցակի փոփոխությունը.

3. Հաստատել մրցութային կարգով ընտրված՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձին (աուդիտորին).

4. Հաստատել «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2025 թվականի հաստատված բյուջեի նախահաշվի փոփոխությունները:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Դ. Խուղաթյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան